«ԱրմենՏել» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2014թ.

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2
Ամփոփ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Ամփոփ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4
Ծանոթագրություն 5

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ընդգրկում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, կազմվել են 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: 2015թ. սեպտեմբերի 23-ին մենք արտահայտել ենք դրական կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ընդգրկում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից Աուդիտի Միջազգային Ստանդարտ (ԱՄՍ) 810 *«Աուդիտորական եզրակացություն տրամադրելու նպատակով՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրականացվող ընթացակարգեր»* ստանդարտի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ընկերության՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Սերգեյ Յակովլև
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC.

23 սեպտեմբերի 2015թ.
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Սույն փաստաթուղթը հանդիսանում է անգլերեն լեզվով պատրաստված բնօրինակի թարգմանությունը: Բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկվել են, որպեսզի հավաստիացում ձեռք բերվի առ այն, որ թարգմանությունը ճշգրիտ է արտացոլում բնօրինակը: Այնուամենայնիվ, տեղեկատվության, տեսակետների կամ կարծիքների մեկնաբանման դեպքում անգլերեն տարբերակը գերակայում է սույն թարգմանության նկատմամբ:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, ՆՈՐԴ բիզնես կենտրոն, 6 -րդ հարկ
Հեռ.՝ (37460) 65 21 65, ֆաքս՝ (37410) 50 13 41, www.pwc.com/am

«ԱրմենՏել» ՓԲԸ
Ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2014թ.	31 դեկտեմբերի 2013թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	49,192,729	57,201,781
Ոչ նյութական ակտիվներ	3,713,342	4,368,330
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	1,901,187	2,060,967
Տրամադրված փոխառություններ	28,290	-
Հետաձգված հարկային ակտիվներ	2,364,868	1,609,073
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	36	60,978
Հետաձգված ծախսեր իրացման պլանների գծով	7,922	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	70,078	70,078
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**57,278,452**	**65,371,207**
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	1,123,064	1,532,791
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,244,231	6,240,560
Տրամադրված փոխառություններ	71,796,732	43,959,177
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար	4,947,581	1,522,817
Այլ փոխհատուցվող հարկեր	711,172	776,824
Հետաձգված ծախսեր	162,336	79,974
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,379,879	12,065,658
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**92,364,995**	**66,177,801**
Ընդամենը ակտիվներ	**149,643,447**	**131,549,008**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Կանոնադրական կապիտալ	18,837,709	18,837,709
Չբաշխված շահույթ	113,025,701	98,324,855
Այլ պահուստներ	2,825,656	2,825,656
Ընդամենը սեփական կապիտալ	**134,689,066**	**119,988,220**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ակտիվների ապագործարկման գծով պահուստ	616,399	550,481
Հետաձգված եկամուտ	388,441	508,058
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**1,004,840**	**1,058,539**
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,621,965	6,491,452
Հետաձգված եկամուտ	230,309	324,819
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր	1,003,412	895,604
Ստացված կանխավճարներ	1,159,544	1,192,968
Պարտավորությունների և վճարների տրամադրում	3,746,148	1,313,614
Այլ հարկային պարտքեր	188,163	283,792
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**13,949,541**	**10,502,249**
Ընդամենը պարտավորություններ	**14,954,381**	**11,560,788**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**149,643,447**	**131,549,008**

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2015թ. սեպտեմբերի 23-ին:

Ա. Պպտախին
Գլխավոր տնօրեն

Դ. Զուրպեխոսվա
Ֆինանսական տնօրեն

Ժ. Պապոյան
Գլխավոր հաշվապահ

«ԱրմենՏել» ՓԲԸ
Ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

հազ. ՀՀ դրամ	**2014թ.**	**2013թ.**
Ծառայությունների մատուցումից հասույթ	56,264,109	58,309,072
Սարքավորումների իրացումից հասույթ	1,168,632	954,325
Ընդամենը հասույթ	**57,432,741**	**59,263,397**
Ծառայությունների ինքնարժեք	(39,779,619)	(38,509,817)
Իրացված սարքավորումների ինքնարժեք	(1,262,247)	(1,511,343)
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	**(41,041,866)**	**(40,021,160)**
Համախառն շահույթ	**16,390,875**	**19,242,237**
Այլ գործառնական եկամուտ	329,533	251,350
Ընդհանուր և վարչական ծախսեր	(5,872,942)	(5,762,510)
Իրացման ծախսեր	(3,620,388)	(3,995,740)
Այլ գործառնական ծախսեր	(3,581,565)	(3,478,343)
Գործառնական գործունեությունից շահույթ	**3,645,513**	**6,256,994**
Ֆինանսական եկամուտ	3,098,899	2,459,416
Ֆինանսական ծախսեր	(58,652)	(52,469)
Զուտ փոխարժեքային տարբերություններից օգուտ՝ հանած վնաս/(վնաս՝ հանած օգուտ)	10,159,528	(29,230)
Շահույթ մինչև հարկումը	**16,845,288**	**8,634,711**
Շահութահարկի գծով ծախս	(2,144,442)	(3,230,272)
Տարվա շահույթ	**14,700,846**	**5,404,439**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**14,700,846**	**5,404,439**

	Ընկերության սեփականատերերին վերագրելի			
հազ. ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Այլ պահուստներ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.	**18,837,709**	**92,920,416**	**2,825,656**	**114,583,781**
Ընդամենը 2013թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	5,404,439	-	5,404,439
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	**18,837,709**	**98,324,855**	**2,825,656**	**119,988,220**
Ընդամենը 2014թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	14,700,846	-	14,700,846
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**18,837,709**	**113,025,701**	**2,825,656**	**134,689,066**

հազ. ՀՀ դրամ	**2014թ.**	**2013թ.**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված վճարումներ	61,799,955	66,200,635
Ստացված տոկոսներ	473,545	239,580
Մուտքեր այլ գործառնական գործունեությունից	255,586	211,856
Ծառայությունների մատուցման գծով վճարումներ	(21,229,112)	(19,226,191)
Վճարումներ աշխատակիցներին	(7,842,945)	(7,789,601)
Վճարված շահութահարկ	(6,325,000)	(5,250,267)
Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը	(5,786,816)	(7,713,281)
Պաշարների մատակարարներին վճարումներ	(2,621,989)	(1,502,522)
Վարձակալության վճարներ	(1,352,810)	(1,351,974)
Գործուղումների համար կարարվող վճարներ	(132,543)	(78,317)
Այլ գործունեությամբ օգտագործված դրամական միջոցներ	(775,450)	(366,418)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**16,462,421**	**23,373,500**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(6,407,284)	(4,628,888)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	86,620	42,293
Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառություններ	(15,019,780)	(12,342,535)
Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառության մարում	4,830	-
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(21,335,614)**	**(16,929,130)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	187,414	47,279
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**12,065,658**	**5,574,009**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**7,379,879**	**12,065,658**

Ծանոթագրություն

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ ամփոփ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից:

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթում ներկայացված բոլոր բացահայտումները, մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրությունները, որոնց բացահայտումը պահանջվում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից՝ ըստ պահանջի: